ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19
Հեռ.՝ +37410 547895
Ֆաքս՝ +37410 547894
Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
CHAIRMAN OF EXECUTIVE BOARD

№ 0419/10

«02» 03 2010թ.

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
պարոն Արթուր Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան

Ղեկավարվելով «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգի 4/04-ի 23-րդ գլխի (բաժնետոմսերի և պարտատոմսերի համար) պահանջներով, որպես հաշվետու թողարկող, Ձեզ ենք ներկայացնում էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթուղթը:

Առդիր՝ 3 (երեք) թերթ:

Հարգանքով՝

Ա. Օսիպյան

www.araratbank.am

ARARATBANK
19, Pushkin str., Yerevan 0010, RA
Phone: +37410 547895
Fax: +37410 547894
E-mail: araratbank@araratbank.am

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ»

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

## ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**

**Հաշվետվություն թիվ 12, 02.03.10թ.**

| | |
|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,072,401 հատ, 25,000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, 10,000 ՀՀ դրամ |

*«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Գարիկ Ադամյան | Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ | | 02.03.2010թ. |
| Արթուր Մելիքյան | Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ | | 02.03.2010թ. |
| Տիգրան Գալստյան | Գլխավոր հաշվապահ-վարչության անդամ | | 02/03/2010թ. |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Աշոտ Օսիպյան | Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն | | 02.03.2010թ. |

02 մարտի 2010 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0030 Ա. 26.02.10

26 փետրվարի 2010 թվականի թիվ 30 Ա

## «ԻՋՄԻՐԼՅԱՆ ՈՒՎԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ԻՋՄԻՐԼՅԱՆ ՈՒՎԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 304 Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2010 թվականի փետրվարի 24-ի թիվ 7 արձանագրություն), քննարկելով «ԻՋՄԻՐԼՅԱՆ ՈՒՎԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լուծարային հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված 2010 թվականի փետրվարի 19-ի թիվ cc 12/10 միջնորդագիրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել «ԻՋՄԻՐԼՅԱՆ ՈՒՎԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լուծարման հաշվեկշիռը:
2. Գրանցումից հանել «ԻՋՄԻՐԼՅԱՆ ՈՒՎԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:
3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավաբանական վարչության լիցենզավորման ու գրանցման երկրորդ բաժնին՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ՄՈՒՏՔԻ ԹԻՎ 1726
«01» 03 2010 թ.
ԹԵՐԹԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝

եռօրյա ժամկետում գրանցումից հանելու մասին գրառում կատարել վարկային կազմակերպությունների գրանցումների մատյանում և այդ մասին ծանուցել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ — **Արթուր Ջավադյան**

2010 թ. փետրվարի 26
ք. Երևան